

ծեր թէ կարելի է հանդիպիլ աւելի մեծ շնորհքի մը — անմաքս ազատ վաճառականութեան...: Երջանիկ՝ ժամանակներ երբ Ապրոններ կ'ապրէին, և Մէհմէտ Դ.ներ, Ֆաթիհներ, խոհեմ և իրապէս գահակալութեան արժանի Սուլթաններ կ'ապրէին, որոնց ձեռքին տակ Ապրոններ կը մեծնային Գազազներ, Պալեաններ, Տիւզեաններ, Նուպարեաններ կ'աճէին, կը ծաղկէին փառք ազգին և երկրին...: Երանի՛ այդ հին օրերուն՝ երբ հայը բախտախնդիրներու ձեռքով, երկրէ երկիր աքսորուելու սովահար ու մերկ իր երկրէն հալածուելու չէր դատապարտուած:

Սուլթան Իպրահիմ Ա. (ծնած 1615) գահակալեց 24 տարեկանին (1639) 9 տարի. իր յաջորդը եղաւ Սուլթան Մէհմէտ Դ. Ղազի (ծնած 1641ին) և գահակալեց 7 տարեկանին (1648ին) մինչեւ 1692, այսինքն 44 տարի:

Այս երկու գահակալութեան ընտանիքէն սերած իր տէրերուն Ապրոյ սիրելի եղաւ:

Ապրոյ մասնակցած է Եղիազար-Յակոբեան (Հոռոմ և Արեւելի) կաթողիկոսական պայքարին, նախապէս թունդ Եղիազարեան մը, բայց յետոյ հանդիպելով Յակոբ կաթողիկոս ջուզայեցիին՝ կը համոզուի անկէ ու անոր կողմը կը բռնէ, որով կարճ ժամանակ վերջ այդ վտանգաւոր պայքարը վերջ կը գտնէ: Կու տանք մանրամասնութիւնը այդ անձերուն. «1665ին Եղիազար Այնթապցի կու գայ Լտիրնէ, ուր կը հաւաքուին նաև իր համախոհները, Պոլսէն, Թէքիրտաղէն: Ասոնց մէջ էր նաև Ապրոյ Չէլէպի «Այր խորագէտ և զգուշաւոր», ինչպէս որ Հ. Չամչեան կ'ըսէ: Ապրոյի խորհուրդով Եղիազարեանը կը սպասեն որ Մարտիրոսեանը (Կաֆայեցի) լմնցնեն ունեցած զրամին՝ կաշառք տալով, և պարտք անգամ կ'ընեն: Հուսկ յետոյ Ապրոյ կը ներկայանայ Եպարքոսին ըսելով թէ ձեր ընտրած կաթողիկոսը Եղիազար Այնթապցին հոս է, բայց թշնամիները չեն ձգեր որ ան իր պաշտօնին անցնի: «Գիտեմ և ես, լուռ լեր» կ'ըլլայ խորամանկ Եպարքոսին պատասխանը՝ որ կը

նայէր թէ՛ Եղիազարեաններէն և թէ՛ անոր թշնամիներէն իր լաւագոյնը փրցնել: Եղիազար իր յաջողիլը տեսնելով այս անգամ աշխատեցաւ Երուսաղէմի պատրիարքութիւնն ալ ձեռք ձգել: Դարձեալ Ապրոյ կը յաջողի «Պէքաթ» (հրովարտակ) մը առնել, որով Եղիազար կ'ըլլայ Կաթողիկոս տարեկան 15,000 դահեկան խոստանալով: Այս հրովարտակին հետ իբր ոչ կարեւոր և երկրորդական ուրիշ հրամանագիր մ'ալ առաւ, որով Եղիազար կ'ըլլար Երուսաղէմի և Աղբ. Պոլսոյ խնամակալը. Եղիազար այս հրովարտակները առնելով գնաց Թէքիրտաղ, անկէ անցաւ Պուրսա:

Ապրոյ կամաց կամաց կը տեսնէ թէ այս թշնամութիւնները կործանում միայն պիտի բերեն, և ազգին հանգիստը խանգարելով պարտքերու պիտի մատնեն՝ զերեւմտա չէլէպի Քէօմլիւրճեանը նամակով մը Մարտիրոս Կաֆայեցիին կը զրկէ, խնդրելով իր նամակին մէջ որ «Երուսաղէմի չէլէպի մատուցանեմ աջոյ վարդապետիդ «նուաստ ծառայ քո Ապրո, և աղերսաւ «նօք աղաչեմ, զի յայսմ գիշերիս հաճեցէք «օթել ի յարկս մեր խօսիլ ինչ առանձին «ընդ մեծութեանդ, ողջ լեր:» Այսպէս Ապրոյ գիշերային ժամադրութիւն մը խընդրելով Երեսմիայէն՝ կ'ուզէ հասկացողութեան մը յանգիլ անոր հետ: Մարտիրոս՝ փորձի համար կը զրկէ Խոսրով անուն մէկը, որ... կը սկսի Մարտիրոսը պախարակել: Ապրոյ այսպէս առիթը չ'ունենար Մարտիրոսին հետ գլուխ գլխի տալով համաձայնութեան մը յանգիլ, մինչ Մարտիրոս յաջորդ օրը դատ կը բանայ Եղիազարի դէմ, բայց շնորհիւ Ապրոյի Եղիազար... կը յաղթէ: Մարտիրոս այս անգամ կը զիմէ առ մեծ իշխան Վեզիր Քէհեասին ու 60 քսակ զրամ կը խոստանայ երբ Մարտիրոսի վերադարձուի Երուսաղէմի Պատրիարքութիւնը: Եպարքոսը կը կանչէ Ապրոն և ըսելով որ անոր թշնամիները 60 կու տան՝ եթէ իրենք 50 տան՝ դատը դարձեալ ի նպաստ Եղիազարեանց կը վճռէ. Ապրոյ կը մերթէ, յայտնելով թէ միայն 40 կրնայ տալ. բայց հուսկ յետոյ կը